ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2016 թվականի թիվ 132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով, <Վարչական իրավախախտումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56^2-րդ հոդվածով, <Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջով

ո ր ո շ ու մ եմ.

1. Համայնքի վարչական տարածքում հողամասերը քաղաքաշինական, հողաշինարարական, անտառշինական կամ ջրաշինարարական նախագծերին չհամապատասխանող նպատակային կամ գործառնական նշանակությամբ օտարելու համար, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ քաղաքային համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանին նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել միջոցներ վարչական պատասխանատվություն առաջացրած խախտումները վերացնելու համար:
3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ վարիչ Արծրուն Նազարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

19 հոկտեմբերի 2016թ.
ք. Իջևան